

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ԲՆԱԳԻՏԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՅԻԿ ՄՈՂՈՒԼ	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1105B4/03
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՍԵՐՎԻՍ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս/ 1-ին կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<ul style="list-style-type: none"> • տեղեկացնել «տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» առարկայի հեռագոտության օբյեկտի ժամանակակից բովանդակությանը, տեսական և գործնական խնդիրներին, • զարգացնել ուսանողների տեսական պատկերացումները աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման էվոլյուցիոն ընթացքի և ժամանակակից բովանդակության վերաբերյալ, • ապահովել անհրաժեշտ տեսական գիտելիքներ համաշխարհային հասարկության նյութական վերարտադրության բնառեսուրսային և հասարակական ներուժի վերաբերյալ, • բացահայտել համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի զարգացման ժամանակակից միտումները, • բացահայտել համամոլորակային հիմնախնդիրների ժամանակակից բովանդակությունը և դրանց լուծմանը միտված համաշխարհային հասարակության ջանքերը:
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ Մահմանել «Տնտեսական և սոցիալական (հասարակական) աշխարհագրություն» գիտակարգի հեռագոտության օբյեկտը, գիտատեսական և գիտագործնական խնդիրները: Նկարագրել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը և ժամանակակից բովանդակությունը: Բացատրել համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի ժամանակակից բովանդակությունը: Բնորոշել համամոլորակային հիմնախնդիրների էությունը և լուծման հիմնական ուղիները:</p> <p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Վերլուծել «Տնտեսական և սոցիալական (հասարակական) աշխարհագրություն» գիտակարգի հիմնարար հասկացությունները: Հիմնավորել համաշխարհային տնտեսության բնառեսուրսային և հասարակական ներժի ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը: Արժևորել գիտա-տեխնիկական հեղափոխության և գիտա-տեխնիկական առաջընթացի բացառիկ նշանակությունը համաշխարհային հասարակության զարգացման համատեքստում: Գնահատել համամոլորակային հիմնախնդիրների լուծման ուղիների և միջոցների արդյունավետությունը:</p>

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ
Տիրապետել պետությունները տիպաբանական դասակարգման ենթարկելու հմտություններին, համաշխարհային տնտեսության բնառեսուրսային և հասարակական ներուժի գնահատման կարողություններին, համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից միտումները ներակայացնելու հմտություններին, համամոլորակային հիմնախնդիրների էությունը բացահայտելու և դրանց լուծման արդյունավետ միջոցներ առաջարկելու /միջազգային փորձի հիման վրա/ հմտություններին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՐԱՐԱԳԻՐ

- ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 6
- ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ - 64
- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 32
- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 8
- ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 24
- ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 4

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Ուսանողները՝ հարակրթական դպրոցի չափանիշներին համապատասխան, պետք է ծանոթ լինեն հասարակական աշխարհագրություն հանրակրթական առարկայի բովանդակությանը:


ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂՆԵՐ

Մեթոդը ուսումնական գործընթացում դասախոսի և ուսանողի համատեղ աշխատանքն է :Յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդների համակարգը որոշվում է տվյալ գիտության ուսուցման խնդիրներով: Քաղաքակրթությունների աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում կիրառվում են ուսուցման ինչպես ակտիվ այնպես էլ պասիվ մեթոդներ: Այստեղ կիրառվող մեթոդներից են՝

- ինտերակտիվ դասախոսություններ /Պատմելու, Բացատրական-նկարագրական Զննական- ցուցադրական/
- խմբային աշխատանք /քննարկումներ և ներկայացումներ/
- ինքնուրույն աշխատանք
- Ուրվագծային քարտեզների հետ կատարվող գործնական աշխատանքի մեթոդներ
- Պրեզենտացիաների կազմում և ներկայացում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
 - «Տնտեսական և սոցիալական (հասարակական) աշխարհագրություն» գիտակարգի հետազոտության օբյեկտը, գիտատեսական և գիտագործնական խնդիրները,
 - Տնտեսական աշխարհագրության հիմնական հասկացությունները:
- Աշխարհի քաղաքական քարտեզ
 - Աշխարհի քաղաքական քարտեզ: Զնավորման փուլերը. ներկայիս բովանդակության վերլուծությունը,
 - Պետությունների դասակարգումը ըստ քանակական հատկանիշների,
 - Պետությունների տիպաբանությունը:
- Համաշխարհային հասարակության զարգացման բնառեսուրսային ներուժը
 - Համաշխարհային հանքային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը,
 - Համաշխարհային հողային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը,
 - Համաշխարհային ջրային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը,
 - Համաշխարհային կլիմայական ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը:
- Համաշխարհային հասարակության զարգացման հասարակական ներուժը



- Համաշխարհային բնակչություն: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը,
- Համաշխարհային բնակչության կազմը,
- Աշխատանքային ռեսուրսներ,
- Համաշխարհային բնակչության տեղաբաշխումը,
- Համաշխարհային բնակչության տարաբնակեցումը:

- Համաշխարհային հասարակության նյութական վերարտադրության համակարգը
 - Գիտա-տեխնիկական հեղափոխության բովանդակությունը. Գիտա-տեխնիկական առաջընթաց,
 - Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները, զարգացման փուլերը,
 - Համաշխարհային տնտեսության տիպերը,
 - Համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը:

- Համաշխարհային տնտեսության աշխարհագրական բնութագիրը
 - Համաշխարհային արդյունաբերության աշխարհագրություն,
 - Համաշխարհային գյուղատնտեսության աշխարհագրություն,
 - Համաշխարհային տրանսպորտի աշխարհագրություն,
 - Համաշխարհային տնտեսության սպասարկման ոլորտի աշխարհագրություն:

- Համամոլորակային հիմնախնդիրներ
 - Համամոլորակային հիմնախնդիրները բնույթը,
 - Համամոլորակային հիմնախնդիրների լուծման հնարավորությունները՝ կայուն զարգացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Յու. Մուրադյան, Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, հ. 1, Եր, 1997,
2. Լ. Հ. Վալեյան, Հասարակական աշխարհագրության ներածություն, Եր., 1999,
3. Ս. Մելքումյան. Տնտեսական աշխարհագրություն, Եր., 2003,
4. География мирового хозяйства. отв. редактор: Н.С. Мироненко. – М., 2012,
5. В. П. Максаковский, Географическая картина мира Кн. I: Общая характеристика мира. Глобальные проблемы человечества, М., 2008,
6. Rob Kitchin, Dialogues in Human geography, National of Lreland, 2013,
7. Combes P.P., Mayer T., Thisse J. T., Economic Geography, Princeton, 2008,
8. Clifford N. J., Holloway S. L., Rice S. P., Valentine G., Key Concepts in geography, 2 nd ed., london, 2009.

ԼՐԱՑՈՒՑԻՉ

- Յու. Մուրադյան, Հասարակական աշխարհագրության հանրագիտական բառարան, Եր., 2008.
- Cloke P., Crang P., Goodwin M., Introducing human geography, 2nd ed, London, 2005,
- Алисов Н. В., Хорев Б. С., Экономическая и социальная география мира, М., 2003,
- <http://www.geo-sfera.info>
- <http://en.wikipedia.org>
- <http://geography.about.com>
- <http://www.hugeog.com/>

ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Նախատեսված է.
 ○ երկու գրավոր ընթացիկ ստուգումներ (ստուգողական աշխատանքներ): Յորաքանչյուր գրավորի հարցաթերթիկները (երկուական տարբերակով) պարունակում են 8-ական հարց, որից 2-ը 20 միավորանոց կշռով, իսկ 6-ը՝ 10 միավորանոց կշռով,
 ○ մեկ ամփոփյալ ստուգում՝ բանավոր: Հարցաթերթիկի յուրաքանչյուր տարբերակ պարունակում է 3 հարց՝ 30, 30, 40 միավորանոց կշռներով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱՊԻՉՆԵՐ ԵՎ
ԿՇԻՌ

1. Գնահատումը կատարվում է 5 բաղադրիչով.
1. Բաղադրիչ 1- 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 2-20% (ընթացիկ ստուգում 1-ին)
3. Բաղադրիչ 2- 20% (ընթացիկ ստուգում 2-րդ)
4. Բաղադրիչ 3-40% (ամփոփյալ ստուգում)
5. Բաղադրիչ 4-10% (ընթացիկ ակտիվություն)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

ԱՅԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
- Ուսանողներին պարբերաբար կտրամադրվի անհրաժեշտ խորհրդատվություն:
- Ուսանողներին կտրամադրվեն անհրաժեշտ ուսումնա-օժանդակ նյութեր՝ կամ տպագիր կամ էլեկտրոնային տարբերակներով:
- Առարկան ուսումնասիրելիս ուսանողները պետք է օգտվեն համացանցի հնարավորություններից:
- Մոդուլային աշխատանքների ժամանակ ծածկաթերթիկների, գրքերի կամ այլ հուշող ուսումնական նյութերի առկայությունը արգելված է:
- Արտագրությունն արգելվում է, և աշխատանքը գնահատվում է զրո:

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատածամանակը	Ուսանողի բնիկանուր աշխատածամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	«Տնտեսական և սոցիալական (հասարակական) աշխարհագրություն» գիտակարգի հետազոտության օբյեկտը, գիտատեսական և գիտագործնական խնդիրները	2					1	3
2.	Տնտեսական աշխարհագրության հիմնական հասկացությունները	2					3	5
3.	Աշխարհի քաղաքական քարտեզ: Պետությունների տիպաբանությունը	2					3	5
4.	Աշխարհի քաղաքական քարտեզ: Պետությունների տիպաբանությունը				2		4	6
5.	Պետությունների տիպաբանությունը		2				4	6
6.	Համաշխարհային բնակչություն: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը, Համաշխարհային բնակչության կազմը	2					3	5
7.	Համաշխարհային բնակչության կազմը: Տեղաբաշխումը և տարաբնակեցումը	2					3	5
8.	Համաշխարհային բնական ռեսուրսների աշխարհագրությունը գնահատումը	2					3	5
9.	Համաշխարհային բնակչության բնական, մեխանիկական շարժերը և կազմը				2		4	6
10.	Համաշխարհային բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցումը				2		4	6
11.	Համաշխարհային բնակչության բնական և մեխանիկական շարժերը		2				4	6
12.	Աշխատանքային ռեսուրսներ, Համաշխարհային բնակչության տեղաբաշխումը, տարաբնակեցումը և կազմը		2				4	6
13.	Համաշխարհային հանքային և հողային ռեսուրսների աշխարհագրություն				2		4	6
14.	Համաշխարհային ջրային և կլիմայական ռեսուրսների աշխարհագրություն				2		4	6
15.	Գիտա-տեխնիկական հեղափոխության բովանդակությունը. Գիտա-տեխնիկական առաջընթաց	2					3	5
16.	Համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը, տիպերը, ոլորտային կառուցվածքը	2					3	5
17.	Գիտա-տեխնիկական հեղափոխության բովանդակությունը. Գիտա-տեխնիկական առաջընթաց				2		4	6
18.	Համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը, տիպերը, ոլորտային կառուցվածքը				2		4	6
19.	Համաշխարհային արդյունաբերության աշխարհագրություն	2					3	5
20.	Համաշխարհային արդյունաբերության աշխարհագրություն	2					3	5
21.	Համաշխարհային գյուղատնտեսության աշխարհագրություն	2					3	5

22.	Համաշխարհային գյուղատնտեսության աշխարհագրություն	2					3	5
23.	Համաշխարհային տրանսպորտի աշխարհագրություն	2					3	5
24.	Համաշխարհային սպասարկման ոլորտի աշխարհագրություն	2					3	5
25.	Համաշխարհային արդյունաբերության աշխարհագրություն				2		4	6
26.	Համաշխարհային վառելիքային արդյունաբերություն		2				4	6
27.	Համաշխարհային գյուղատնտեսության աշխարհագրություն				2		4	6
28.	Համաշխարհային տրանսպորտի աշխարհագրություն				2		4	6
29.	Համաշխարհային զբոսաշրջության աշխարհագրություն				2		4	6
30.	Համամոլորակային հիմնախնդիրները	2					3	5
31.	Կայուն զարգացում	2					3	5
32.	Համամոլորակային հիմնախնդիրների կապը				2		4	6
Ընթացիկ ստուգում 1								2
Ընթացիկ ստուգում 2								2
Սմփոփիչ ստուգում								2
Ընդամենը								180